«Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ
Alexander Spendiarian Opera and Ballet National Academic Theatre, NCSO

N 784
26.12.2025

«Առավոտ» օրաթերթի լրագրող
տիկին Արփինե Սիմոնյանին

Հարգելի՛ տիկին Սիմոնյան,

«Առավոտ» օրաթերթի անունից 2025 թվականի դեկտեմբերի 26-ի Ա-044 համարով ուղարկված Ձեր հարցման վերաբերյալ հայտնում ենք՝

1. Հարցման մեջ նշված չէ հարցման իրավական հիմքը: Եթե Դուք Ձեր հարցումը ներկայացրել եք «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի, այսուհետ՝ օրենք, համաձայն, ապա այն չի համապատասխանում օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներն: Այսպես՝ չի ներկայացվել որևէ իրավական հիմք, որի համաձայն Արփինե Սիմոնյանն իրավունք ունի հանդես գալու «Առավոտ» օրաթերթի անունից: Բացի այդ, ծանուցման մեջ նշված չէ «Առավոտ» օրաթերթի լրիվ անվանումը, այդ թվում՝ կազմակերպական-իրավական ձևը: Իսկ գտնվելու վայրը նշվել է օտար լեզվով, որով խախտվել է «Լեզվի մասին» օրենքի պահանջը: Այս առումով օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ձեր հարցմանը պատասխան չպետք է տրվեր:

2. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն անձնական տվյալը՝ **ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն,** որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն **անձնական տվյալների մշակում** է համարվում անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելով կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ **փոխանցելու** կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ: Իսկ նույն մասի 3-րդ կետի համաձայն անձնական տվյալները **երրորդ անձանց փոխանցում է համարվում** անձնական տվյալները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողությունը, այդ թվում՝ զանգվածային լրատվության

Հայաստան, Երևան 0002, Թումանյան 54, հեռ.՝ +374 10 52 02 41 | +374 10 52 33 82
www.opera.am | info@opera.am | operaballettheatre@gmail.com

միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների համաձայն անձնական տվյալները կարող են մշակվել, այդ թվում՝ երրորդ անձանց փոխանցվել միայն տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնությամբ:

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն «Աշխատողի անձնական տվյալները աշխատանքային հարաբերությունների հետ կապված և որոշակի աշխատողին վերաբերվող՝ գործատուին անհրաժեշտ տեղեկություններն են: Աշխատողի անձնական տվյալների մշակում է համարվում աշխատողի անձնական տվյալներն ստանալը, պաշտպանելը, համակարգելը, **փոխանցելը** կամ ցանկացած այլ կերպ օգտագործելը:» Նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն աշխատողի անձնական տվյալները կարող են փոխանցվել միայն աշխատողի գրավոր համաձայնությամբ կամ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում:

Վերոգրյալից ելնելով՝ հայտնում ենք, որ «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն պետական ոչ առևտրային կազմակերպությունը», այսուհետ՝ Թատրոն, առանց Թատրոնի տնօրենի օգնական Վրեժ Դուրգարյանի գրավոր համաձայնության իրավունք չունի Ձեզ տրամադրելու Թատրոնի տնօրենի օգնական Վրեժ Դուրգարյանի կողմից գործատու Թատրոնին տրված որևէ անձնական տվյալ, այդ թվում՝ նրա կրթության վերաբերյալ տեղեկատվություն:

Հարգանքով՝

Թատրոնի տնօրեն Կարեն Դուրգարյան